Քրիստոնյա Հայաստան

2017, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (483)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*30 մարտի*

### ԵԱՀԿ-ի կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար Իգնասիո Սանչես Ամորին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ պատգամավոր Արտաշես Գեղամյանի եւ Իսպանիայի Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ավետ Ադոնցի:

Պրն Իգնասիո Սանչես Ամորն ուրախություն հայտնեց համայն հայության նվիրական հոգեւոր կենտրոն այցելելու առիթով՝ ընդգծելով, որ դրանով իր այցը Հայաստան ավելի է ամբողջանում եւ հնարավորություն ընձեռում ճանաչելու թե՛ Հայաստանը, թե՛ հայ ժողովրդին:

Նորին Սրբությունը, ողջունելով ԵԱՀԿ-ի կարճաժամկետ դիտորդական առաքելության ղեկավարին, ի դեմս նրա շնորհակալություն հայտնեց ԵԱՀԿ-ին՝ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ Մինսկի խմբի կողմից գործադրվող ջանքերի համար, եւ գոհունակություն հայտնեց պրն Ամորի ղեկավարած դիտորդական առաքելության առիթով՝ վստահություն հայտնելով, որ առաքելության աշխատանքը կնպաստի ապրիլի 2-ին Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների բարեհաջող անցկացմանը:

Զրույցի ընթացքում, ի պատասխան պրն Իգնասիո Սանչես Ամորի, Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պատմական առաքելությանը հայ ժողովրդի կյանքում, ազգային ինքնության ու մշակույթի պահպանման գործում եւ ներկայիս գործունեությանը հայոց կյանքի տարբեր ոլորտներում: Խոսվեց Եկեղեցու կողմից իրականացվող հովվական-հոգեխնամ աշխատանքի, կրթական եւ սոցիալական ծրագրերի, ինչպես նաեւ հոգեւորականների պատրաստության մասին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

*6 ապրիլի*

### Ֆրանսիական «La Croix» օրաթերթի մի խումբ ընթերցողների եւ աշխատակիցների



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ֆրանսիական «La Croix» կաթոլիկ օրաթերթի աշխատակազմին եւ մի խումբ ընթերցողների՝ ուղեկցությամբ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու սպասավոր Սահակ սրկ. Սուքիասյանի եւ օրաթերթի գլխավոր խմբագրության անդամ Ֆեդերիկ Մունյեի:

Ողջունելով բարեկամ ժողովրդի զավակների ուխտագնացությունը Հայաստան եւ համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրանց բերեց իր օրհնությունն ու գնահատանքը՝ մասնավորապես խոսելով հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների միջեւ ձեւավորված դարավոր բարեկամության եւ երկու պետությունների սերտ գործակցության մասին:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ Ֆրանցիսկոս Պապի հետքերով կաթոլիկ ուխտավորներն այցելում են Հայաստան՝ իբրեւ առաջին քրիստոնյա երկիր, հաղորդակից դառնում նրա քրիստոնեական մշակույթին եւ հոգեւոր-ազգային արժեքներին: Հայոց Հայրապետը կարեւորեց նման ուխտագնացությունների կազմակերպումը՝ ընդգծելով, որ դրանք մեծապես նպաստում են միջեկեղեցական կապերի առավել ամրապնդմանը, տարբեր ժողովուրդների փոխճանաչողությանը:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում, Եկեղեցու եւ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերներին ու դրանց հաղթահարմանն ուղղված ջանքերին:

Զրույցի ընթացքում Ֆեդերիկ Մունյեն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց օրաթերթի գործունեությունը՝ ընդգծելով, որ օրաթերթի աշխատակազմն ամեն ջանք ի գործ է դնում՝ տարբեր ժողովուրդների միջեւ խթանելու երկխոսությունը եւ ձեւավորելու փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության ու վստահության մթնոլորտ: Խմբի անունից շնորհակալություն հայտնելով Նորին Սրբության օրհնության եւ ջերմ խոսքերի համար՝ Մունյեն նաեւ ներկայացրեց Հայաստան այցի անմոռանալի տպավորությունները:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն առ Աստված աղոթքով մաղթեց, որ Բարձրյալ Տերը ազգերի ու ժողովուրդների մեջ զորացնի միմյանց նկատմամբ սերը:

### Կաթոլիկ Եկեղեցու Ինսբրուքի թեմի կառավարչին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կաթոլիկ Եկեղեցու Ինսբրուքի թեմի (Ավստրիա) կառավարիչ մոնսինյոր Յակոբ Բյուրգլերին՝ ուղեկցությամբ «Ինսբրուք Կարիտաս» բարեսիրական հասարարական կազմակերպության տնօրեն Գեորգ Շաումերի:

Գարեգին Բ Հայրապետը հյուրերին ներկայացրեց Հայոց Եկեղեցու առաքելությունն ազգային կյանքում՝ հանգամանորեն խոսելով լայնածավալ գործունեության, հատկապես Եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական բազմաբնույթ ծրագրերի մասին:



Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու միջեւ առկա ջերմ եղբայրական հարաբերություններին եւ սերտ գործակցությանը: Նորին Սրբությունը նաեւ գոհունակությամբ հիշեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Եկեղեցիների առջեւ ծառացած մարտահրավերներին, ի մասնավորի՝ եկեղեցականների պատրաստության եւ սրբավայրերի վերականգնման ու պահպանության խնդրին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Ծ. վրդ. Անանյանը

*10 ապրիլի*

### Հայրապետական կրթաթոշակին արժանացած ուսանողներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված Հայրապետական կրթաթոշակին այս տարի ներկայացված Հայաստանի բուհերի երեք ուսանողների՝ ուղեկցությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի:

Ուսման ընթացքում ցուցաբերած բարձր առաջադիմության համար կրթաթոշակ է շնորհվել Սյուզաննա Իսրայելյանին (ԵՊՀ, բակալավրի 4-րդ կուրս), Գոհար Մանուկյանին (ԵՊԲՀ, բակալավրի 2-րդ կուրս) եւ Անի Մկրտչյանին (ԵՊԿ, բակալավրի 1-ին կուրս): Վերջիններիս Հայոց Հայրապետին ներկայացրեց Վարդան եպիսկոպոսը՝ հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը:

Ապա Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ուսանողներին՝ շնորհավորելով նրանց ուսման մեջ արձանագրած առաջադիմության առիթով եւ հորդորելով նույն ոգով, նվիրումով ու նախանձախնդրությամբ շարունակել իրենց ուսումնառությունը:

*Շարունակությունը՝ էջ 2*

*10 ապրիլի*

## Հայրապետական կրթաթոշակին արժանացած ուսանողներին



*Սկիզբը՝ էջ 1*

«Ուրախություն եւ հոգու մխիթարություն է Մեզ համար, որ Կրթության եւ գիտության նախարարության կողմից այսպիսի հնարավորություն է ընձեռվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որպեսզի իր փոքրիկ ներդրումն ունենա նաեւ բարձրագույն կրթության ոլորտում:

Սա առանձնահատուկ խորհուրդ ունի Մայր Աթոռի համար. աջակից լինել այն ուսանողներին, որոնք ուսումնական տարվա ընթացքում լավագույն արդյունքներն են գրանցել, եւ նրանց բերել Սուրբ Էջմիածնի օրհնությունը», - նշեց Վեհափառ Հայրապետը՝ իր գնահատանքը հայտնելով նաեւ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանին՝ նախարարության եւ Հայաստանյայց Առաքելական Ս Եկեղեցու միջեւ ձեւավորված արդյունաշատ գործակցության համար:

Իր խոսքում Գարեգին Բ Կաթողիկոսը, անդրադառնալով կրթության կարեւորությանը, Հայրապետական կրթաթոշակակիրներին կոչ արեց ստացած կրթությունն ապագային ծառայեցնել ոչ միայն իրենց անձերի եւ անձնական բարեկեցության ապահովման համար, այլ նաեւ ստացված գիտելիքներով ու հմտություններով մասնակից դառնալ հայրենի երկրի առաջընթացին ու ժողովրդի բարօր կյանքի կերտմանը:

Իսկ Լեւոն Մկրտչյանն իր խորին երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ ընդգծելով, որ բարի ավանդություն է ձեւավորվել, որը շատ ոգեւորիչ եւ հիշարժան է կրթաթոշակի արժանացող ուսանողների համար:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը ուսանողներին Աստվածաշունչ մատյան նվիրեց եւ հանձնեց կրթաթոշակի վկայականները:

## ԵՊԲՀ ուսանողների եւ զինվորների



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողներին, ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոցի աշակերտներին, ինչպես նաեւ ռազմական գործողությունների ընթացքում վիրավորված զինվորներին՝ ուղեկցությամբ ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանի:

Հանդիպմանը ԵՊԲՀ ռեկտորը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին ընդունելության համար: Տիար Ա. Մուրադյանը Նորին Սրբությանը ներկայացրեց մարտական գործողությունների ժամանակ տարբեր աստիճանի վիրավորումներ ստացած զինվորներին, ում սխրանքն իրենց տարեկից ուսանողների, ապագա բժիշկների համար օրինակ է մարդասիրության ու հայրենանվիրումի: Այս կապակցությամբ նա նաեւ երախտագիտությամբ նշեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող Իզմիրլյան բժշկական կենտրոնում ապրիլյան պատերազմի օրերին հայրենյաց պաշտպաններին ցուցաբերված օգնությունը:

Այնուհետեւ ամենքին իր օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հետաքրքվեց յուրաքանչյուր զինվորի առողջական վիճակով՝ համայն հայության անունից իր գնահատանքն ու խոնարհումը բերելով նրանց՝ իրենց դրսեւորած արիության եւ անձնազոհության համար: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ առաջնագիծ կատարած այցերի ընթացքում ամեն անգամ տեսնում է հոգով վերափոխված, հասուն երիտասարդների, առանձնակի պատասխանատվության գիտակցությունն ունեցող քաջարի հայորդիների:

Խոսքն ուղղելով ուսանող երիտասարդներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց նրանց գնահատել հայ զինվորի սխրանքը՝ հավելելով, որ հայրենիքի խաղաղությունը պայմանավորված է յուրաքանչյուրի ծառայասիրությամբ, իսկ սահմանը սկսվում աշխատավայրից: Վեհափառ Հայրապետը կարեւորեց, որ յուրաքանչյուր հայորդի այս գիտակցությամբ իր ծառայությունը բերի հայրենիքին՝ նպաստելով երկրի առաջընթացին, ժողովրդի բարօր ու խաղաղ կյանքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը անդրադարձ կատարեց նաեւ հայ հոգեւորականների դերակատարությանը Հայոց բանակում, հոգեւոր առաջնորդության ծառայությանը, անգամ մարտական գործողությունների ընթացքում հայ զինվորին ցուցաբերվող հոգեւոր զորակցությանը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ ուսանողների հարցերին, որոնք վերաբերում էին բժշկի ծառայության մեջ հավատի ընկալմանը, Հայ Եկեղեցու քարոզչությանը, քրիստոնեական դաստիարակությանը եւ Եկեղեցու առջեւ ծառացած արդի մարտահրավերներին:

Հանդիպման առիթով Նորին Սրբությունը բոլորին ընծայեց Ս. Գրիգոր Նարեկացու Աղոթամատյան, իսկ զինվորականները Վեհափառին փոխանցեցին սահմանագծում ծառայող զինվորների կողմից պատրաստված սրբապատկերը:

Վերջում Գարեգին Բ Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց եւ Աստծու զորակցությունը մաղթեց ներկաներին, զինվորականներին ցանկացավ լիարժեք շուտափույթ ապաքինում:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

*12 ապրիլի*

## ՈՒԵՖԱ - ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) նախագահ Ալեքսանդր Չեֆերինին՝ ուղեկցությամբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանի:

Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով ֆուտբոլի եւ առհասարակ սպորտի կարեւոր դերակատարությանը ազգերի միջեւ՝ փոխճանաչողության եւ համերաշխության հաստատման գործում, ցավով նշեց, որ այսօր որոշ ուժերի կողմից այն նաեւ քաղաքական շահարկումների թիրախ է դառնում: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետն իր ցավակցությունը հայտնեց ՈՒԵՖԱ-ի նախագահին՝ նախորդ օրը գերմանական ֆուտբոլային ակումբներից մեկի դեմ գործված ահաբեկչության առիթով: Դատապարտելով կատարվածը՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ պետական եւ հասարակական կառույցները պետք է ամեն ջանք գործադրեն՝ զերծ պահելու սպորտը նման բռնարարքներից:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց ՈՒԵՖԱ-ին եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային՝ համատեղ ջանքերով Վաղարշապատում ֆուտբոլի ակադեմիա հիմնադրելու եւ այն համապատասխան մարզագույքով օժտելու ուղղությամբ տարվող աշխատանքների համար:

Նորին Սրբությունը շեշտեց, որ Հայոց Եկեղեցին նույնպես կարեւորում է սպորտը. Եկեղեցու հովանու ներքո Հայաստանում գործող 10 հայորդյաց տներում ստեղծվել են բոլոր հնարավորությունները, որպեսզի պատանիները հաճախեն տարբեր սպորտային խմբակներ եւ մարզվեն:

Զրույցի ընթացքում ՈՒԵՖԱ-ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինն իր խորին շնորհակալությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունելության համար՝ նշելով, որ իր վրա մեծ տպավորություն է թողել հայ ժողովրդի պատմությունը: ՈՒԵՖԱ-ի նախագահը նույնպես ընդգծեց, որ սպորտաձեւերը եւ մասնավորապես՝ ֆուտբոլը, կոչված են միավորելու ազգերին եւ ոչ թե պառակտելու: Պրն Չեֆերինը շեշտեց, որ ֆուտբոլը կարեւոր նշանակություն ունի երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործում եւ նրան հետ է պահում տարբեր անցանկալի, մեղսալի երեւույթներից:

Վերջում Վեհափառ Հայրապետը ՈՒԵՖԱ-ի նախագահին ցանկացավ արգասավոր գործունեություն եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ արդյունավետ գործակցություն:

ՈՒԵՖԱ-ի պատվիրակությունն այցելեց նաեւ Մայր տաճար:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

*Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սբ Էջմիածնից Ս. Աստվածածնի Ավետման տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր ժողովրդին եւ մեր բարեմաղթանքները՝ մայրության բերկրանքին սպասող կանանց, բոլոր մայրերին եւ օրիորդներին:*

*Սիրելինե՛ր, այսօր մեր Ս. Եկեղեցու խորաններից Տիրամոր բարեխոսությամբ օրհնություն է բաշխվում բոլոր հավատացյալներին, օրհնվում են մայրության բերկրանքին սպասող կանայք, եւ փոխանցվում է Սբ Ավետման հրեշտակաձայն հորդորը՝ ուրախ լինելու, քանզի Տերը ձեզ հետ է (հմմտ. Ղուկաս Ա 28): Դարեր շարունակ այս լուսաբեր ավետիսով քաջալերվել եւ զորացել է քրիստոնյա մեր ժողովուրդը, իսկ մեր մայրերն ու քույրերը, օրինակ ունենալով սբ Մարիամ Աստվածածնի կատարյալ մոր տիպարը, իրենց զավակներին կրթել եւ դաստիարակել են հավատով, առ հայրենին սիրով ու նվիրումով եւ անփոխարինելի իրենց նպաստը բերել ազգային-եկեղեցական ու հասարակական մեր կյանքին:*

*Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Ավետման այս նվիրական տոնի խորհրդով զորացած՝ տիկնայք, մայրերն ու օրիորդները շարունակեն արդյունավորել իրենց նվիրական ջանքերը՝ հանուն մեր երկրի առաջընթացի, մեր ժողովրդի բարօրության, իրենց ընտանիքների ամրության եւ երջանկության: Թող Տիրոջ Ամենախնամ Աջի հովանու ներքո բոլոր մայրերը ուրախ սրտով գրկեն իրենց մանուկներին եւ մեծացնեն խաղաղության ու ապահովության մեջ:*

## Ս. Աստվածածնի Ավետման տոնը Մայր Աթոռում



Ապրիլի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Ս. Աստվածածնի Ավետման տոնը, որը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ հռչակվել է նաեւ իբրեւ Մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր: Մայր տաճարում օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի եպիսկոպոսաց ժողովի գրասենյակի տնօրեն Զաքարիա Ծ. վրդ. Բաղումյանը:

Հայր սուրբը սրբազան արարողության ընթացքում հավուր պատճաշի քարոզ խոսեց՝ անդրադառնալով օրվա խորհրդին եւ ընդգծելով Տիրամոր դերակատարությունը մարդկության պատմության մեջ: Նա նաեւ շնորհավորեց Պատարագին ներկա մայրերին, կանանց եւ օրիորդներին՝ մաղթելով քաջառողջություն ու երջանկություն, եւ հայցեց ս. Աստվածածնի բարեխոսությունը նրանց համար:

*«Ս. Աստվածածինը ճշմարիտ մոր, Աստծու կամքին անվերապահ հնազանդվող եւ իր առաքելությունը գիտակցող մարդու օրինակն է, ով ոչ միայն ծնեց աշխարհի Փրկչին, այլեւ տառապեց ու ցավ ապրեց՝ իր միակ զավակին տալով մարդկության փրկության համար: Տեսեք՝ նա երբեք չտատանվեց եւ թերահավատ չգտնվեց, այլ իր անսահման խոնարհությամբ ցույց տվեց, որ Աստծու կամքը վեր է երկրային ամեն ինչից:*

*Անկասկած, նույն ձեւով մենք էլ, եթե Աստծու կամքը գերադասենք մարդկային մեր կամքից եւ զանազան ցանկություններից, ապա Աստված մեզ նույնպես Տիրամոր նման կդարձնի իր առաքելության անբաժանելի մասնիկը»*,- նշեց հայր Զաքարիան:

*Շարունակությունը՝ էջ 3*

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

***Ապրիլի 2-ին՝ Մեծ պահքի Գալստյան կիրակի օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցված Պատարագի ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ 2016 թ. ապրիլյան պատերազմում զոհված քաջարի զինվորների համար: Պատարագին եւ հոգեհանգստյան կարգին ներկա էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանը: Ներկա հոգեւոր դասը եւ ժողովուրդը, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, աղոթք բարձրացրեցին մարտական գործողությունների ժամանակ զոհված հայրենյաց պաշտպանների հոգիների հանգստության համար: Հոգեհանգստյան արարողությունից առաջ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը հրապարակեց Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքն այդ առիթով:***



*Սիրելինե՛ր,*

*Այսօր համախմբված ենք մեր աղոթքներն առ Աստված բարձրացնելու՝ քաջարի մեր զինվորների հոգիների խաղաղության ու հանգստության համար, ովքեր հերոսաբար զոհվեցին ապրիլյան պատերազմի ընթացքում՝ իրենց կյանքը տալով հանուն հայրենիքի եւ մեր ժողովրդի պաշտպանության:*

*Ողջունում ենք ՀՀ մեծարգո վարչապետի ներկայությունը Ս. Էջմիածնի նվիրական տաճարում, ով եկել է իր աղոթակցությամբ մասնակից լինելու հոգեհանգստյան այս արարողությանը:*

*Մեկ տարի առաջ մեր խիզախ զինվորները կասեցրեցին Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքին բռնացող ռազմական գործողությունները, նաեւ արյան գնով ետ մղեցին դավադիր հակառակորդին՝ վկայելով հանուն անկախության ու հայրենի երկրի՝ մեր ժողովրդի նախանձախնդրությունը, ուժն ու կորովը եւ անպարտելի ոգին:*

*Մեծ պահքի այս օրը Գալստյան կիրակին է, որը հիշեցնում է մեր Տիրոջ գալուստը եւ Իր հավատարիմ հետեւորդներին հավիտենական կյանքի շնորհին արժանացնելը: Մեր զոհված հերոսները փոխադրվեցին հանդերձյալ կյանքի հանգրվան՝ մուտք գործելու հավիտենություն եւ անանց երանությունը ժառանգելու, քանզի անձնազոհության մեծագույն առաքինություն դրսեւորելով՝ քրիստոսանմանության սխրանք իրագործեցին: Այս մխիթարությունն է բարձրաձայնում առաքյալի խոսքը. «Աստված մեզ չնախասահմանեց բարկության համար, այլ փրկությունը ժառանգելու համար, որպեսզի արթուն լինենք թե ննջենք, Նրա հետ միասին ապրենք» (Ա Թեսաղ. 5.9-10):*

*Հայոց բանակի մարտունակությունը, մեր զինվոր զավակների սխրանքը ծնեցին հերոսության նոր, բացառիկ օրինակներ, որոնք հավելվեցին մեր պատմության էջերում արձանագրված մեր փառապանծ հայրերի սխրանքին ու քաջագործություններին: Մեր զոհված զավակներն իրենց մատաղ կյանքը բաշխեցին ազգին ու Մայր Հայրենիքին, մեզ ամենքիս, որպեսզի մենք նրանց դրսեւորած վճռականությամբ ու նախանձախնդրությամբ պահպանենք մեր խաղաղությունն ու արժանապատվությունը, լինենք միասնական, կերտենք հզոր ու ապահով, առաջադեմ ու անհաղթ Հայաստան: Եվ նրանց մշտավառ հիշատակի ու անձնազոհության առջեւ առավել վճռականորեն պիտի ջանքեր բերենք մեր հայրենիքի նոր կյանքի կերտմանը, պետության առաջընթացին ուղղված գործընթացներին նախանձախնդիր մասնակցությամբ: Բազում փորձությունների առաջ մեր ժողովուրդը միասնականությամբ, առ հայրենին սիրո, հանձնառության ու զոհողության մղումով է ամուր բազուկ դարձել եւ խորտակել թշնամիների հարվածները, հաղթել չարին, դիմագրավել ավերներն ու կորուստները, հարուցյալ կյանք կերտել: Եվ այսօր նույն ոգով մեր ժողովուրդն ի զորու է առատացնել հայրենանվեր գործերը, արդյունավետ դարձնել ազգային կյանքը, շենացնել իր հայրենին, որն իրապես կլինի արժեւորումը հանուն հայրենիքի ու ազգի իրենց կյանքը նվիրած հայորդիների պայծառ հիշատակի:*

*Սիրելինե՛ր, այսօր միասնական աղոթք ենք բարձրացնում առ Ամենակալն Աստված, որպեսզի պահպանվի խաղաղությունը մեր հայրենիքի սահմաններում, եւ այլեւս անհրաժեշտություն չլինի կյանքի թանկ գին վճարելու ազատ ու անկախ ապրելու արդար իրավունքի պաշտպանության համար: Աղոթում ենք, որ Երկնավոր Տերն Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո պահապանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, աշխարհասփյուռ մեր ժողովրդին, պահապանի մեր բոլոր զինվորներին եւ միշտ պարգեւի զորություն ու հաղթություն: Հայցում ենք, որ Ողորմածն Աստված Երկնքի արքայության հանգրվաններում հանգստություն եւ երանություն պարգեւի զոհված մեր զավակների լույս հոգիներին եւ Սուրբ Հոգու բյուր շնորհներով մխիթարի եւ սփոփի սգակիր սրտերը զոհվածների ընտանիքների, հարազատների, զինակից ընկերների եւ բոլոր վշտացյալների:*

*Փառք Հայոց հաղթական ու քաջարի բանակին:*

*Աղոթք եւ օրհնություն մեր խիզախ հայորդիների լույս հիշատակին:*

*«Յիշեսցէ Տէր զհոգիս նորոգ ննջեցելոց եւ հանգուսցէ զնոսա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. Ամէն»:*



# Ս. Աստվածածնի Ավետման տոնը Մայր Աթոռում



*Սկիզբը՝ էջ 2*

Պատարագի վերջում, հանդիսապետությամբ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի, կատարվեց մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության կարգ:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի շենքում հանդիպեց Մայր Աթոռի տարբեր կառույցներում եւ բաժիններում պաշտոնավարող շուրջ 160 աշխատակցուհիների հետ:

Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի ողջույնի խոսքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Մայր Աթոռի աշխատակցուհիներին՝ շնորհավորելով Ս. Ավետման տոնի առիթով:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց կնոջ կարեւոր դերն ու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ անդրադառնալով հայ կնոջ նվիրյալ, քրիստոսասեր ու հայրենասեր ոգուն, պատմության դժվարին ժամանակներում խոնարհությանը եւ հնազանդությանը զուգընթաց դրսեւորած արիությանը եւ համարձակությանը:

*«Մեր մայրերն իրենց հայացքը միշտ ուղղել են դեպի Աստվածածնայրը եւ փորձել են նմանվել Աստվածամոր կերպարին՝ իրենց աստվածսիրությամբ, առ հայրենին եւ առ ընտանիքն ունեցած սիրո մեջ: Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ նման հատկություններով եւ արժանիքներով, նման ոգով եւ նկարագրով օժտված հայ տիկնայք ունենք, հայ մայրեր ու քույրեր»*,- ընդգծեց Հայոց Հայրապետը:

Վեհափառը կարեւորեց նաեւ հայ կնոջ դերակատարությունն ընտանիքի ամրապնդման գործում՝ նշելով, որ կինը կոչված է ամենաբարձր ծառայության՝ Աստծուց տրված մայրության շնորհի կենսագործմանը: Նորին Սրբությունը հորդորեց մեր ժողովրդին այսօր բաժին ընկած կյանքի դժվարին պայմաններում քաջությամբ եւ առ Աստված ապավինությամբ հաղթահարել փորձությունները, ոգի դառնալ իրենց ամուսինների եւ զավակների համար, որպեսզի իրենց հայացքի առջեւ միշտ ունենան հայրենիքի լուսավոր ապագան:

Խոսելով եկեղեցական կյանքում նրանց բերած օգտաշատ ու նվիրյալ ծառայության մասին՝ Գարեգին Բ Հայրապետը պատգամեց. *«Ձեր հոգում միշտ ամուր պահեք հավատքը. հավատքը հրաշագործող ուժ ու զորություն է, հավատքը երջանկության աղբյուրն է, որ մշտապես պիտի ուղեկցի ձեզ: Այդ հավատքով պիտի նաեւ զինեք, սնեք ու դաստիարակեք ձեր զավակներին եւ այդ հավատքով ապրեք ձեր կյանքի յուրաքանչյուր օրն ու վայրկյանը, որպեսզի հավատքով շաղախված լինի մեր կյանքը...»*:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի աշխատակցուհիներին մաղթեց Աստծո առատ օրհնություններն ու շնորհները՝ վերստին շնորհակալություն հայտնելով նրանց ծառայության համար:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսը քվեարկեց Էջմիածին քաղաքում

Ապրիլի 2-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Էջմիածին քաղաքի 14/11 ընտրական տեղամաս, ուր մասնակցեց ՀՀ խորհրդարանական ընտրությունների քվեարկությանը:



Քվեարկությունից հետո այս առիթով Նորին Սրբությունը մասնավորապես ասաց. *«Մեր քվեարկությունը կատարեցինք՝ բարին մաղթելով, հայցելով, որ այս ընտրությունները մեր ժողովրդին բերեն առաջընթաց, զարգացում եւ ապահովեն խաղաղ, անվրդով կյանք, նաեւ հավելեն մեր ժողովրդի կյանքում լավատեսություն, հույս ու հավատ: Թող Աստված օրհնի մեր երկիրը եւ աշխարհասփյուռ ազգս հայոց»*:

# Կարգալույծ է հռչակվել Եզրաս քհն. Բոգդանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Եզրաս քհն. Բոգդանը (Ռումինիայի հայոց թեմ):

Տնօրինության համար հիմք է ծառայել Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթեւ եպս Հակոբյանի եւ թեմական խորհրդի միջնորդագիրը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ դասվում է աշխարհականների շարքը եւ կկոչվի իր ավազանի անունով՝ Փաուլ Բոգդան:

# Ավագ շաբաթվա արարողություններն ու



Ինչպես գիտենք, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարության տոնին նախորդող շաբաթը կոչվում է Ավագ շաբաթ, քանզի այն ընդգրկում է Տիրոջ երկրային կյանքի վերջին օրերի ուսուցումները, չարչարանքները, խաչի վրա մահն ընդունելն ու հարություն առնելը:

**Ավագ շաբաթն սկսվում է Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակումով՝ Ծաղկազարդով, որն այս տարի տոնախմբվեց ապրիլի 9-ին:** Տոնը տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ նաեւ հռչակվել է որպես Մանուկների օրհնության օր:



Այս կապակցությամբ Առավոտյան ժամերգության ավարտին Մայր տաճարի շրջափակում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Անդաստանի արարողություն եւ մանուկների օրհնության կարգ: Վերջում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց տոնի առիթով Մայր Աթոռում համախմբված բազում մանուկներին: Հայոց Հայրապետը ներկա փոքրիկներին խաչեր նվիրեց, իսկ հավատավոր ժողովրդին բաժանվեցին Անդաստանի ընթացքում օրհնված ուռենու ճյուղեր:

Ապա Մայր տաճարում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, ով իր քարոզում մասնավոր անդրադարձ կատարեց տոնի խորհրդին:

Ս. Պատարագի ավարտին վերստին կատարվեց մանուկների օրհնության արարողություն, որի ժամանակ տաճարում ներկա երեխաները հրավիրվեցին ատյան, ուր արժանացան Ամենայն Հայոց Հայրապետի աղոթքին եւ օրհնությանը: Մայր տաճարի առջեւ Նորին Սրբությունը նաեւ իր հայրական օրհնությունը բաշխեց իր հրավերով Սուրբ Էջմիածին ժամանած Հրազդանի Երեխաների աջակցության հիմնադրամի ցերեկային կենտրոնի հաշմանդամություն ունեցող շուրջ 130 երեխաներին:

Վերջիններիս համար Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպվեց ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից մանուկներին նվերներ ընծայվեցին: Երեխաները Մայր Աթոռի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տանը ներկա գտնվեցին իրենց համար հայորդյաց տան սաների կողմից նախապատրաստված համերգին:

Տոնի առիթով, Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը 2.000.000 ՀՀ դրամի աջակցություն ցուցաբերեց Հրազդանի Երեխաների աջակցության հիմնադրամի ցերեկային կենտրոնին:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց տարբեր թեմերի եկեղեցիներում ծառայող մանուկ դպիրներին, ովքեր Մայր տաճարում մասնակցեցին Ծաղկազարդի սուրբ Պատարագին: Իր օրհնությունը բերելով նրանց՝ Նորին Սրբությունը գովեց պատանիներին՝ իրենց հավատավոր նկարագրի համար, եւ մաղթեց նույն ոգով շարունակել եկեղեցանվեր ծառայությունը Տիրոջ Ս. Խորանին:



**Ավագ երկուշաբթի օրը՝ ապրիլի 10-ին,** Եկեղեցին անդրադարձավ Անպտուղ թզենու չորացմանը: Բեթանիայից Երուսաղեմ վերադառնալիս Հիսուսը, ճանապարհի վրա մի թզենի տեսնելով, մոտենում է քաղցը հագեցնելու, սակայն տերեւներից բացի ոչինչ չգտնելով՝ թզենուն ասում է. «Այսուհետեւ քեզնից հավիտյան պտուղ թող չլինի»: Նույն պահին թզենին չորանում է:

Անիծելով սաղարթախիտ, բայց անպտուղ թզենուն՝ Տերն ակնարկում էր նրանց, ովքեր արտաքնապես բարեպաշտ են թվում, սակայն չունեն բարի գործեր եւ ողորմածություն անելու հանձնառությունը:

**Ապրիլի 11-ին՝ Ավագ երեքշաբթի օրը,** հիշատակումն է Տասը կույսերի առակի:

Այս առակին անդրադառնալով՝ Եկեղեցին հորդորեց հոգեպես պատրաստ լինել Քրիստոսի երկրորդ գալստյանը, որպեսզի երկնքի արքայությունից դուրս չմնանք՝ այն հինգ հիմար կույսերի նման: Օրվա ավետարանական հիմնական պատգամն է. «Արթո՛ւն կացեք, որովհետեւ չգիտեք Տիրոջ գալստյան եւ ձեր բարի կամ չար գործերի քննության ո՛չ օրը եւ ո՛չ էլ ժամը»:

**Ապրիլի 12-ին՝ Ավագ չորեքշաբթի օրը,** Եկեղեցին անդրադարձավ Տիրոջ օծմանն ու մատնությանը, հիշատակեց այն մեղավոր կնոջը, ով թանկագին յուղով օծեց Քրիստոսի գլուխը, ինչը խորհրդանշում էր Նրա մոտալուտ մահը. «Իմ մարմնի վրա այդ յուղը թափելով՝ նա Իմ թաղվելը կանխանշեց: Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին, նաեւ ինչ որ դա արեց»: Իսկ օծման այդ դեպքին էլ հաջորդեց Հուդայի՝ Հիսուսին մատնելու վճիռը:

**Ապրիլի 13-ին՝ Ավագ հինգշաբթի**, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին հիշատակեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Վերջին ընթրիքը եւ Ս. Հաղորդության խորհրդի հաստատումը:

Մայր տաճարում հավարտ Առավոտյան ժամերգության կատարվեց Ապաշխարողաց կարգ, իսկ այնուհետեւ տեղի ունեցավ Միջօրեի ժամերգություն:

Ժամերգության ավարտին Միածնաէջ տաճարում, ձեռամբ Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի խմբագրության աշխատակից Ոսկան քհն. Հովհաննիսյանի, մատուցվեց Պատարագ՝ ի հիշատակ Վերջին ընթրիքի ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման:

Ս. Պատարագի ընթացքում ընթերցվեց Բարսեղ Կեսարացու ճառը Ս. Հաղորդությունից առաջ:

Նույն օրը, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում կատարվեց Ոտնլվայի արարողություն, որի ընթացքում Մայր Աթոռի միաբանների կողմից ընթերցվեցին օրվա սուրբգրային հատվածներն ու ԺԳ դարի նշանավոր վարդապետ Հովհաննես Երզնկացի Պլուզի սիրո մասին խրատը:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը, որից հետո շարականների երգեցողության ներքո, Հիսուս Քրիստոսի օրինակով, Նորին Սրբությունը ծնրադիր լվաց եւ յուղով օծեց տասներկու անձանց



ոտքերը, որոնց թվում էին Մայր Աթոռի միաբաններ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաներ, Երեւանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի ուսանողներ, զինվորներ, Մայր Աթոռի «Էօռնեկեան» եւ այլ հանրակրթական դպրոցների աշակերտներ ու մանուկներ:



Արարողության վերջում օրհնված յուղը բաժանվեց հավատացյալներին:

Ուշ երեկոյան, նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Խավարման կարգը, որը վերաբերում է Ավագ ուրբաթին:



**Ապրիլի 14-ին՝ Ավագ ուրբաթ օրը,** կատարվեցին Խաչելության եւ Թաղման կարգերը:

**Ապրիլի 15-ին՝ Ավագ շաբաթ օրը՝** երեկոյան, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնի առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց Ճրագալույցի Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Մինչ Պատարագը կատարվեց Ճաշու երրորդ ժամերգությունը, ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ կարդացին Դանիել մարգարեի թուղթը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի բարերարներ եւ բազում ուխտավոր հայորդիներ:

Պատարագի ընթացքում Արշակ սրբազանն անդրադարձ կատարեց



# Հարության տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում





Քրիստոսի սուրբ հարության խորհրդին եւ կարեւորությանը մարդկային փրկության գործում՝ մասնավորապես նշելով. *«Մենք Քրիստոսի հարության ժառանգներն ենք: Չլիներ Քրիստոսի հարությունը, անիմաստ պիտի դառնային Քրիստոսի կյանքի պատմության պարբերական շարադրանքները, անիմաստ պիտի դառնար մեր յուրաքանչյուր քարոզություն, ինչպես ժամանակին բարբառում էր Պողոս առաքյալը: Ի՞նչ իմաստ պիտի ունենար պատումը Քրիստոսի ծննդյան մասին: Ի՞նչ իմաստ պիտի ունենար Քրիստոսի տասներկուամյա հասակում այցելությունը տաճար: Ի՞նչ իմաստ պիտի ունենար Ծաղկազարդի նշումը, եւ արդյոք ի՞նչ արժեք պիտի ունենար քառասնօրյա պահեցողությունը:*



*Միայն ու միայն Քրիստոսի հրաշափառ հարությունն է, որ իմաստ ու նպատակ է հաղորդում այս բոլոր իրադարձություններին: Քրիստոսի հարությունն է, որ քրիստոնեությունը պարզ, բարոյաէթիկական ուսմունքից վերածում է համաշխարհային մի այլ իրադարձության: Քրիստոսի հարությունն է, որ սկիզբն է դնում մի նոր քաղաքակրթության եւ մի նոր աշխարհայացքի: Քրիստոսի հարությունն է վերջապես, որ մեզ ամենքիս պատգամ եւ ուղերձ է ուղղում մահվան առջեւ հաղթականորեն կանգնելու: Մահն այլեւս իրական ներկայություն չէ մեր կյանքում, մահը ստվեր է, իրականը կյանքն է, որ Քրիստոս պարգեւեց Իր հրաշափառ եւ լուսեղեն հարությամբ: Եվ այս ամենն ընդամենը գեղեցիկ հեքիաթ չէ եւ այս ամենն ընդամենը եւ սոսկ մխիթարություն չէ, ինքնամխիթարություն չէ: Սա մի իրականություն է, որին դարեր շարունակ հավատացել են ամենքը...: Սա մի իրականություն է, որ աղքատներին հարուստ է դարձրել, մի իրականություն, որ չքավորներին դարձրել է աշխարհի ամենաունեւորը: Եվ այդ իրականությունն այսօր ոգեշնչում է մեզ՝ մարտնչելու կյանքի դժվարությունների դեմ»*:

Անդրադառնալով առ Աստված ապավինությանը եւ հավիտենական կյանքին՝ պատարագիչ սրբազան հայրն ընդգծեց. *«Մենք էակներ ենք ոչ թե դատապարտված մահվան, ոչ թե դատապարտված ընդամենը մի կույտ հող լինելու, այլ էակներ ենք, որոնց կյանքը ձգվում է մահվանից անդին: Եվ երկրավոր կյանքը մեզ համար դառնում է մի հանգրվան, որը ստուգատեսն ու նախերգանքն է հավիտենական կյանքի»*:

Վերջում Արշակ եպիսկոպոսը մաղթեց, որ Աստված զորացնի ամենքի մեջ սերը, նվիրումը եւ հավատարմությունն առ Աստված, զորացնի նաեւ Քրիստոսի հարության նկատմամբ հավատի զգացումները եւ հարության շնորհներով լուսավորի նրանց հոգիներն ու սրտերը:



Ս. Պատարագի ավարտին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձրանալով Ավագ խորան, սբ Սեղանի կանթեղից վառեց Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու մոմը, որպեսզի հավատացյալները հնարավորություն ունենան իրենց հարկերից ներս տանելու հարուցյալ Աստվածորդու կենարար լույսը:

Ապա հոգեւորականների թափորը Մայր տաճարից առաջնորդվեց դեպի Հին վեհարան, ուր տեղի ունեցավ Ս. Հարության առաջին տնօրինեքի արարողությունը:

**Ապրիլի 16-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ շուքով նշեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնը:**

Տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Պատարագ մատուցեց Հայոց Եկեղեցու հովվապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:



Հոգեւորականների խաչվառազարդ թափորով, «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ տիկին Ռիտա Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը Վեհարանից ամպհովանիով առաջնորդվեցին դեպի Մայր տաճար, ուր նրանց դիմավորեցին Մայր Աթոռի «Էօռնէկեան» հանրակրթական դպրոցի աշակերտները, ՀԲԸՄ Երեւանի սկաուտական խմբի անդամները եւ բազում ուխտավորներ:



Հայրապետական ամպհովանին այս տարի կրում էին «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգեւատրված զինծառայողներ փոխգնդապետ Արտյոմ Գեւորգյանը, սերժանտ Շուլի Հակոբյանը, կրտսեր սերժանտ Ռազմիկ Գասպարյանը եւ շարքային Հարություն Բադալյանը: Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ որպես առընթերականեր, սպասավորում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին նաեւ ՀՀ Ազգային ժողովի նախագահի Գալուստ Սահակյանը, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, Հայկական բարեգործական ընդհանուր միության անդամներ, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Արարարողության ընթացքում Նորին Սրբությունը Սուրբ Էջմիածնից «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» հրեշտակաբարբառ ավետիսով հայրապետական իր պատգամը հղեց աշխարհասփյուռ հայ ժողովրդին:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի կեանս յաւիտենական ետ մեզ Աստուած, եւ այս են կեանքն, որ յՈրդին նորա են»
(Ա Հովհ. Ե 11):

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,*

*Մեծ Պահքի օրերի խոկումներով ու խորհրդով, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի չարչարանքների ու խաչելության իրադարձությունների ապրումներով այսօր հասել ենք Փրկչի հրաշափառ Հարության լուսափայլ օրվան, որը տոնում ենք հոգու բերկրանքով ու խնդությամբ: Արդարեւ, անսահման է ուրախությունը այսօր մեր հոգիներում, քանզի Քրիստոսի Հարությամբ մահը խորտակվեց, եւ մարդկանց տրվեց պարգեւը հավիտենական կյանքի, երկնքի արքայության: «Աստուած յաւիտենական կեանք տուեց մեզ. եւ այդ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»: Հովհաննես առաքյալի այս խոսքերով Մեր պատգամն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, որ հավաքված եք Մայր տաճարում, եւ համայն մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփյուռս:*

*Արդեն բացված են մեր եկեղեցիների սուրբ խորանների վարագույրները՝ խորհրդանշելով, որ բաց են հավիտենության դռները: Հնչում է ավետիսը Փրկչի Հարության՝ ազդարարելով, թե ամեն ոք, ով ունի փափագը, քաղցն ու ծարավը երկնքի արքայության, կարող է ժառանգել՝ ընդունելով այն կյանքը, որ Քրիստոսի մեջ է:*

*Քրիստոսի Հարությամբ մարդուն տրվել է զորությունը հարուցյալ կյանքի, մեղքն ու չարիքը վանելու, իր նմանի հանդեպ սիրով ու ողորմածությամբ երկրային կյանքը լցնելու երկնային օրհնությամբ ու շնորհներով, երկնային արքայության պատկերը հաստատելու աշխարհում, որտեղ թագավորում են արդարությունն ու ճշմարտությունը, առատանում խաղաղությունն ու խնդությունը: Քրիստոսի պարգեւած հարուցյալ կյանքի մեջ չկան տագնապներ, չկան բռնություն ու պատերազմներ, աղքատություն ու թշվառություններ, չկան տարաբնույթ մոլություններ, որոնք ցավ ու տառապանք են պատճառում մարդկանց, օտարացնում միմյանցից, բեւեռացնում հասարակությունները, ծնում աղետներ: Այս ամենը, սակայն, շարունակում են մնալ աշխարհում, քանզի մարդկային սրտերը հաճախ սիրուց պարպված, շահամոլությունից կարծրացած ու անձնակենտրոն՝ անարձագանք են մնում հարուցյալ նոր կյանքի կոչին: Մինչդեռ խաչելությունները հարությամբ պսակելու, դժվարություններից ու նեղություններից, վշտերից ու չարչարանքներից հառնելու ուղին քրիստոսակենտրոն կյանքն է, որ խաղաղարար ոգով, բարի գործերով, պարկեշտ ընթացքով, առաքյալի խոսքի համաձայն, առաջնորդում է դեպի հավիտենություն. «Աստուած յաւիտենական կեանք տուեց մեզ. եւ այդ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»:*

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, երկրային այս կյանքը տրված է մեզ որպես ժամանակ Աստծո փրկարար կամքի վկայությունը բերելու, Աստծո պատվիրաններն ու պատգամները իրագործելու մեր իրականության մեջ, մեր ընտանիքներում, մեր երկրում, մեզ շրջապատող աշխարհում:*

*Շարունակությունը՝ էջ 6*

# Ապրիլի 6-ը՝ համայնավարական բռնապետության տարիներին հալածված եւ նահատակված հոգեւորականների հիշատակի օր

Ապրիլի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Նահատակ հոգեւորականաց հուշապատի առջեւ, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ համայնավար բռնապետության զոհ դարձած հոգեւորականների համար:

Արարողության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ապրիլի 6-ը՝ երանաշնորհ Տ. Տ. Խորեն Ա. Մուրադբեկյան Ամենայն Հայոց Հայրապետի նահատակության օրը, հռչակեց համայնավարական բռնապետության տարիներին հալածանքների ու աքսորի ենթարկված եւ նահատակված հոգեւորականների հիշատակի օր:

Հոգեհանգստյան կարգին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, պաշտոնեությունը եւ բարեպաշտ հավատացյալներ, ինչպես նաեւ բռնադատված եկեղեցականների ժառանգներն ու հարազատները:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն օրվա խորհրդի շուրջ իր պատգամն ուղղեց ներկաներին:

*«Աղոթական ոգով կատարեցինք համայնավարական բռնապետության տարիներին նահատակված մեր Ս. Եկեղեցու արժանավոր սպասավորների հոգեհանգստյան արարողությունը:*

*Մեր նահատակյալ հոգեւորականների շարքում է նաեւ եկեղեցամարտ իշխանությունների կողմից բռնության ենթարկված ու սպանված Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ դժվարին ժամանակներում հայոց հոգեւոր կյանքի վերազարթոնքի համար անձնդիր ջանքեր ներդրած մեծանուն Հայրապետը, ում մահվան տարելիցն է այսօր:*

*Ոգեկոչման այս արարողությունը վերստին մեզ առիթ է ընձայում անդրադառնալու պատմության հոլովույթներում Առաքելական մեր Ս. Եկեղեցու կրած զրկանքներին ու փորձություններին, որոնց միջով անցնելիս մեր Մայր Եկեղեցին չի սասանվել, այլ հաստատուն քայլերով շարունակել է իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում՝ շնորհիվ նվիրյալ սպասավորների կորովի ջանքերի ու սխրանքների: Երկնահաճո եւ ազգօգուտ ծառայությունը նորոգ ձեռքբերումներով զարդարելու վճռականությամբ լցված՝ հալածանքների ժամանակաշրջանում Տիրոջ արժանավոր սպասավորները ապրում ու գործում էին բազում արգելքների ու խոչընդոտների մեջ, առ Բարձրյալն աղոթքով, առ Քրիստոս մեր Տերն անբեկանելի հավատարմությամբ եւ լուսավոր գալիքի հույսով: Պատմական այդ ծանր շրջանում մեր հոգեւորականներն իրենց կյանքը զոհեցին, որպեսզի անմար մնա հավատքի լույսը հայոց մեջ, շարունակվի մեր Ս. Եկեղեցու առաքելությունը եւ հավատավոր հայոց ազգին դեպի փրկություն եւ հավիտենություն առաջնորդելու ծառայությունը՝ համահունչ առաքելական խոսքին. «Ինչքան որ շատ բաժնեկից լինենք Քրիստոսի չարչարանքներին, նույնքան եւ Քրիստոսի միջոցով մեր մխիթարությունն էլ առավել կլինի. քանզի, եթե նեղություն ենք կրում, այդ՝ ձեր մխիթարության եւ փրկության համար է» (Բ Կորնթ. Ա 5-6):*

*Ի հեճուկս 20-րդ դարասկզբին հայ ժողովրդին պատուհասած ցեղասպանության՝ չընկճվեց եկեղեցականաց դասի աննկուն ոգին՝ վերստին ապացուցելով Տիրոջ հետեւորդների կամքի հզորությունը եւ հավատքի մեծագույն ուժը:*

*Այդ եկեղեցականների լուսավոր կերպարը եւ անձնազոհության դրսեւորումը վառ օրինակ են եւ ուսանելի մեր ժամանակի հոգեւորականաց համար՝ հայոց ազգային-եկեղեցական անդաստանում նույն նախանձախնդիր ոգով ու գովարժան հանձնառություններով առավել արդյունավորելու նվիրյալ ծառայագործությունը, արգասավորելու մեր Սբ Եկեղեցու պատմական առաքելությունը հայրենիքի եւ մեր ժողովրդի կյանքում:*

*Սիրելինե՛ր, մեր անձնազոհ հոգեւորականների վառ հիշատակի առջեւ հարգանքով եւ խոնարհումով, Հայոց երանյալ Հայրապետ Խորեն Ա Մուրադբեկյանի նահատակության օրը՝ ապրիլի 6-ը, հռչակում ենք համայնավարական աստվածամերժ բռնապետության տարիներին հալածանքների ու աքսորի ենթարկված եւ նահատակված եկեղեցականների հիշատակի օր»*,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ոգեկոչման արարողության առիթով Նորին Սրբությունը հայրապետական իր գնահատանքն ու օրհնությունը բերեց նահատակված հոգեւորականների հիշատակը հավերժացնող հուշապատի կառուցման բարերար Ալեքսանդր Տեր-Ավանեսովին (Մոսկվա, ՌԴ) եւ շինարար Գագիկ Գալստյանին, աղոթքով հիշեց հուշարձանի ճարտարապետ լուսահոգի Ջիմ Թորոսյանին:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերն անսասան պահի հայրենի պետությունը, Առաքելական Ս. Եկեղեցին եւ խաղաղ՝ Հայոց աշխարհը:





# Ավագ շաբաթվա արարողություններն ու ...



*Սկիզբը՝ էջ 5*

*Մեր կյանքն արժեք ու բովանդակություն է ստանում Քրիստոսի մահվան ու Հարության խորհրդի լույսի ներքո: Պողոս առաքյալն ուսուցանում է՝ ասելով. «Եւ նա մեռաւ բոլորի համար, որպէսզի նրանք, որ կենդանի են, միայն իրենց համար կենդանի չլինեն, այլեւ Նրա համար, ով մեռաւ եւ յարութիւն առաւ իրենց համար» (Բ Կորնթ. Ե 15): Ապրել Քրիստոսով եւ Քրիստոսի համար, ահա այս է փրկարար ուղին մեր կյանքի, հիմքը, պայմանն ու երաշխիքը թե՛ որպես անհատ եւ թե՛ որպես հավաքականություն մեր հոգեւոր աճի ու զորացման, նաեւ՝ մեր հայրենիքի առաջընթացի ու զարգացման, աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության ու լուսավոր գալիքի:*

*Այսօր բազմաթիվ խնդիրների առջեւ է կանգնած մեր երկիրը, մեր սահմաններում անկայուն է խաղաղությունը, տակավին հաղթահարված չեն աղքատությունն ու գործազրկությունը, հրամայական են արտագաղթի կանխումը եւ մեր ժողովրդի զավակների դարձը դեպի հայրենիք:*

*Հանդիման այս մարտահրավերների՝ մեր ժողովուրդն ունի վսեմ հատկանիշները հայրենանվիրումի, ազգասիրության, ընտանիքի նվիրականության, ծնողի հանդեպ սիրո, ունի հանձնառություն զոհողությունների՝ հանուն իր սրբազան արժեքների, եւ մենք ի զորու ենք անառիկ պահելու հայրենի սահմանները, բարօր ու բարգավաճ դարձնելու մեր երկիրը, բացառելու ազգային մեր կյանքից բոլոր տագնապներն ու ցնցումները: Մեր կյանքի ընթացքը, մեր կենսակերպը մեզ ոչ թե պիտի ջլատեն, պառակտեն, այլ միավորի եւ դարձնեն համախումբ՝ դիմագրավելու համար մեր կյանքի մարտահրավերներն ու փորձությունները եւ լավատեսությամբ իրականություն դարձնելու ազգային մեր տեսիլքները: Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք, մեր հավատը, որ Քրիստոս հարություն է առել, անհուսությունը փոխում է հույսի, տկարությունը՝ ուժի, անտարբերությունը՝ նախանձախնդրության, արծաթսիրությունը՝ բարեգործության, եւ ծառայությանն ու աշխատանքին միախառնում է նվիրումի ու հանձնառության ոգին: Այս փոխակերպությանն ենք կոչված, որով միայն կարող ենք անկորուստ պահել մեր երկիրն ու ազգային կյանքը եւ հաղթանակներ արձանագրել մեր ժողովրդի ու հայրենիքի բարօրության ու առաջընթացի պայքարում: Արդ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, բոլորս՝ պաշտոնյա, աշխատավոր, զինվոր, ձեռնարկատեր, մտավորական, հոգեւորական, նորոգած մեր մեջ քրիստոնեական ոգին, ամրապնդված հույսով քայլենք այն ճանապարհով, ապրենք այն ճշմարտությամբ, ընդունենք այն կյանքը, որ Քրիստոսն է՝ հարուցյալ մեր Տերը, որպեսզի գրո հիշատակի արժանի գործերով պայծառակերպվի ազգիս կյանքը ի սփյուռս աշխարհի եւ լցվի աստվածային պարգեւներով եւ երկնային օրհնությամբ: Եվ մենք քաջալեր մեր Տիրոջ պարգեւած փրկության հավատով եւ տոգորված բարի գործոց ջերմ եռանդով՝ առաքյալի հետ վստահությամբ ասենք. «Եւ մենք Ճշմարտի՝ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ ենք. որովհետեւ Նա՛ է ճշմարիտ Աստուած եւ յաւիտենական կեանք» (Ա Հովհ. Ե 20):*

*Մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության բերկրալի ավետիսով մեր ողջույնն ենք բերում մեր հոգեւոր եղբայրներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արք. Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական Տեղապահ Գերաշնորհ Տ. Գարեգին արք. Բեկչյանին, քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին եւ մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին: Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանին՝ առաջին տիկնոջ հետ, Արցախի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին, մեր ողջույնն ենք բերում հայոց պետական ավագանուն, նորընտիր Ազգային Ժողովի պատգամավորներին եւ մաղթում, որ Տերը զորացյալ պահի առ ազգն ու հայրենին սիրո մեջ՝ հայրենաշեն ձեռքբերումներով արդյունավորելու բարձր ու պատասխանատու իրենց առաքելությունը: Օրհնությամբ ու բարեմաղթանքներով ողջունում ենք Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում հավատավոր մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս:*

*Աղոթում ենք եւ հայց բարձրացնում առ մեր Տերը Հիսուս Քրիստոս, որ հրաշափառ Իր Հարության շնորհները լուսավորեն մարդկության կյանքը, խաղաղություն տիրի ողջ աշխարհում, խաղաղություն հաստատվի մեր հայրենի սահմաններում: Աղոթում ենք, որ մեր ժողովրդի հավատավոր գործերի բարի արդյունքներով հզորանա մեր հայրենիքը, միշտ պայծառ լինի մեր Ս. Եկեղեցին, եւ աշխարհասփյուռ ազգս հաստատուն ընթացքով առաջնորդվի դեպի փրկություն ու հավիտենություն՝ այսօր եւ միշտ. ամեն:*

*Քրիստոս յարեաւ ի մեռելոց*
*Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:*

Ս. Պատարագի ավարտին «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատանը տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը վերստին ներկաներին փոխանցեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Ս. Հարության ավետիսը՝ աղոթելով Հայոց աշխարհի խաղաղության եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի բարօրության համար:

Ս. Զատկի տոնի առիթով Մայր Աթոռի ու ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող հայորդյաց տների կողմից Սուրբ Էջմիածնի շրջափակում կազմակերպվել էր հայորդյաց տների սաների աշխատանքների ցուցահանդես եւ նկարչական մրցույթ:



# ԲԱԲԵԼՈՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ




2009 թվականի գարնանը ես դեռ Փարիզում էի: Ավարտվել էր համալսարանի քննական առաջին շրջանը, եւ թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների վրա աշխատող ուսանողներն ունեին մոտ 15 օր արձակուրդ: Այդ օրերին ես որոշեցի կրկին պտտել Փարիզի՝ արդեն որերորդ անգամ իմ անցած փողոցներում՝ հենց այնպես, ուղղակի հանգստանալու նպատակով:

Այդ նշանավոր քաղաքի փողոցներն ունեին ինչ-որ գեղանկարչական, զարմանալի եւ յուրահատուկ հմայք: Ո՛չ, ոչ թե իրենց անզուգական ճաշակի ու ճարտարապետական լուծումների առանձնահատկության շնորհիվ, այլ՝ մարդկանց դեմքերի ու վարքագծի: Ես միշտ նկատում էի, որ այստեղ մարդիկ՝ հարուստ թե աղքատ, անտուն թե մեծատուն, ասես նույնանում են... նույնանում ոչ թե իրենց ստեղծած «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն» (Liberté, Egalité, Fraternité) հեղափոխական-հանրապետական սկզբունքով, այլ՝ ավելի շուտ իբրեւ մի մեծ, տարածական, գեղանկարչական պատկերի փոխլրացնող մասնիկներ: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր անփոխարինելի տեղը՝ ֆրանսիական բարոկկոյից մինչեւ պոստմոդեռնի ամենաժամանակակից մտայնության վրձիններով կերտված համայնապատկերում:

Եվ ահա ես քայլում էի Montparnasse փողոցի երկայնքով: Համեմատաբար նորակառույց, շքեղ ու երկնահուպ աշտարակը (Tour de Montparnasse) իր ահեղ ոտքերով գամվել էր նույնանուն կայարանի հարթ հատակին՝ ամենատես հայացքով հսկելով ուշ միջնադարից սկիզբ առնող այս փողոցը: Արդեն երեկո էր իջնում, եւ վաղ գարնանային փարիզյան քամին թափանցում էր մարմնիս ու ոսկորներիս մեջ: Փողոցի երկայնքով, իբրեւ փարիզյան գեղանկարչական բնապատկերի անբաժանելի մաս, աստ-անդ կուչ էին եկել մուրացիկները, որոնց, ֆրանսիական ոգուն բնորոշ նրբությամբ, անվանում էին «մարդիկ՝ առանց մշտական կեցության» (SDF-sans domicile fixe): Ներքին անբացատրելի հետաքրքրությունից մղված՝ մոտեցա նրանցից մեկին. միջին տարիքի մի տղամարդ էր՝ ժամանակից շուտ ծերացած, թորշնված դեմքով ու երկար մազ-մորուքով, անխնամ հագուստով եւ տխուր ու խելացի աչքերով: «Բարե՛ւ, բարեկա՛մ, - մի քիչ վեհերոտ ու անվստահ ձայնով ողջունեցի նրան,- ի՞նչ կարող եմ անել քեզ համար»: «Դու հո Կաղանդ պապը չես...,- եղավ հեգնախառն ժպիտով պատասխանը:- Չե՞ս տեսնում, որ սոված եմ... համ էլ ցուրտ է...»: Հասկացա, որ մի քիչ հիմար հարց էի տվել եւ անմիջապես ուղղվեցի դիմացի պիցցերիան, գնեցի մի մեծ պիցցա ու մոտեցա իմ նոր ծանոթին: «Վերցրո՛ւ, սա քեզ»,- ու պիցցան մեկնեցի նրան: «Իսկ դո՞ւ, դու սոված չե՞ս,- հարցրեց նա:- Երկար ես քայլել, արի՛ միասին ուտենք»: Շփոթված նայեցի շուրջբոլորս, բայց որոշեցի հարմար տեղավորվել նրա կողքին՝ մայթի վրա: Խոստովանեմ, որ այդ պահի առաջին րոպեները սարսափելի դժվար էին ինձ համար. ցուցամոլ երեւալու ամոթը եւ մուրացիկի հետ շփվելու վախը հակասական զգացումներ առաջացրին ու մի պահ կաշկանդեցին լեզուս ու միտքս: Ինչեւէ, մենք լուռ «ճաշեցինք», հետո իմ նոր ծանոթը որոշ պարզաբանում մտցրեց. «Գիտե՞ս, ես Բաբելոնի քաղաքացի եմ: Արդեն երկու տասնամյակից ավելի է...»: «Ի՞նչ Բաբելոն»,- ակամա հարց տվեցի՝ մտքումս անմիջապես եզրակացնելով, որ նա հավանաբար ուներ մտային որոշ խանգարումներ ու մթագնումներ: «Չէ՛, չէ՛, մի՛ վախեցիր, ես խենթ չեմ, ճիշտ եմ ասում,- շտապեց վստահեցնել նա:- Գիտե՞ս՝ ինչ է Բաբելոնը... աշտարակ է, ճիշտ այնպիսին, ինչպիսին տեսնում ես հիմա,- կեղտից սեւացած ձեռքով ցույց տվեց Montparnasse-ի աշտարակը:- Նմանատիպ կառույցներում մարդիկ ապրում են ոչ թե կողք կողքի, այլ իրար վրա: Սովորաբար ամենավերեւում գտնվողները հենվում են ամենաստորինների վրա՝ այդպիսով կարծելով, թե ամենամոտն են Աստծուն,- քրքջոցով ասաց նա:- Բայց խեղճերը միշտ մոռանում են, որ Բաբելոնում Աստված վերեւից իջավ ներքեւ, մոտեցավ ամենաստորիններին ու խառնեց աշտարակը կառուցող ամենավերեւինների ծրագրերը,- շարունակեց քրքջալ նա:- Դե, ես էլ հիմա ասում եմ, որ Բաբելոնի՛ քաղաքացի եմ... բայց, ինչպես տեսնում ես, բախտս բերել է. Աստված դեռ ներքեւում է: Թող ամենավերեւում կանգնածները պատրեն իրենք իրենց՝ Աստծուն շա՜տ մոտ գտնվելու գայթակղությամբ»:

Ես լռեցի... Ակամայից հիշեցի ռուս մեծ մտածող Ֆ. Դոստոեւսկու այն խոսքը, թե մարդուն սիրելու համար մարդու դեմքը բնավ կարեւորություն չունի: Իսկապես, իմ ամբողջ կիսամյակի աստվածաբանության ու փիլիսոփայության՝ երբեմն ձանձրալի թվացող դասախոսություններն այս՝ բոլորի կողմից արհամարհված Բաբելոնի քաղաքացու մեկ նախադասությունն անգամ չարժեին: Նկատառումս այդ պահին միգուցե խիստ էր ու չափազանցված, բայց ինձ համար մայթի վրա այդ օրն ավարտվեց շատ հաճելի մթնոլորտում...

***Շահե Ծ. վրդ. ԱՆԱՆՅԱՆ***

# Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագրեր է հղել

*3 ապրիլի*

## ՌԴ նախագահին եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սանկտ Պետերբուրգի մետրոյում տեղի ունեցած պայթյունի կապակցությամբ ցավակցագիր է հղել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի, հոգեւոր դասի եւ հայ ժողովրդի անունից վշտակցություն է հայտնել ՌԴ նախագահին, Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետին, զոհվածների հարազատներին եւ Ռուսաստանի ողջ ժողովրդին:

*«Հայցում ենք մեր Տիրոջը՝ երկնային օթեւաններում ընդունել զոհվածների հոգիները: Թող Աստված Իր Սուրբ Հոգով մխիթարի նրանց ընտանիքներին ու բարեկամներին եւ շուտափույթ ապաքինում պարգեւի բոլոր վիրավորներին»*,- նշել է Վեհափառ Հայրապետն իր ցավակցագրում՝ մաղթելով, որ ամենողորմ Տերը խաղաղ եւ ապահով պահի Ռուսաստանը եւ նրա բարեպաշտ ժողովրդին:

*9 ապրիլի*

## Ղպտի եկեղեցու հովվապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ, Ալեքսանդրիայի Պապ եւ Համայն Աֆրիկայի Թավադրոս Բ Պատրիարքին՝ Տանտայի (Եգիպտոս) Մար Գիրգիս եկեղեցում եւ Ալեքսանդրիայի Ս. Մարկոս եկեղեցու առջեւ տեղի ունեցած ահաբեկչությունների առիթով, որոնց զոհ են դարձել եւ վիրավորվել բազմաթիվ անմեղ մարդիկ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության եւ Հայոց Եկեղեցու հավատացելոց անունից ցավակցություն է հայտնել Նորին Սրբությանը եւ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հետեւորդներին:

*«Այս ծանր պահին Մեր աղոթքներով ու մտքով զոհվածների ընտանիքների եւ Ձեզ հետ ենք»*,- նշել է Վեհափառ Հայրապետը՝ դատապարտելով ահաբեկչական գործողությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցել է ամենազոր Աստծուն՝ երկնային օթեւաններում հանգստություն պարգեւել զոհվածների հոգիներին, մխիթարություն՝ նրանց ընտանքներին եւ քույր Եկեղեցու բոլոր հավատացյալներին:

# Ի Տեր ննջեց Զարեհ Ծ. վրդ. Պարոնյանը



Ռումինիայի հայոց թեմից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին տեղեկացվել է, որ ապրիլի 13-ի առավոտյան՝ կյանքի 76-րդ տարում, վախճանվել է Ս. Էջմիածնի միաբան Զարեհ Ծ. վրդ. Պարոնյանը:

Վաստակաշատ հայր Զարեհի վախճանը մեծ ցավ է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու համար: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը խորապես սգում են բարեհիշատակ Զարեհ Ծ. վարդապետի մահը:

Ապրիլի 19-ին Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց առաջնորդանիստ եկեղեցում հընթացս Պատարագի կատարվեց հայր Զարեհի վերջին օծումը, ապա հուղարկավորության արարողությունը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն է հղել Կ. Պոլսո Հայոց Պատրիարքության ընտրյալ տեղապահին

Մարտի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով, որի ընթացքում մասնավորապես քննության առնվեցին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունում պատրիարքական տեղապահի ընտրությունների առնչությամբ տեղ գտած վերջին զարգացումները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անդրադարձ կատարելով ստեղծված իրավիճակին, ժողովականներին տեղեկացրեց նաեւ Պատրիարքության եկեղեցական համագումար ժողովի ատենապետ Եղիշե վրդ. Ուչքունյանի եւ ատենադպիր Տրդատ քհն. Ուզունյանի կողմից մարտի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին առաքված գրության մասին, որով Ամենայն Հայոց Հայրապետին պաշտոնապես հայտնվել է մարտի 15-ին Պատրիարքարանում տեղի ունեցած ժողովի արդյունքում Գարեգին արք. Բեքչյանի՝ պատրիարքական տեղապահի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

Քննարկումների ավարտին Նորին Սրբությունը ծանուցեց պատրիարքական տեղապահի ընտրությունն օրհնելու վերաբերյալ կայացված որոշման մասին, ինչը ողջունվեց Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների կողմից:

Նույն օրը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նամակ հղեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության եկեղեցական համագումար ժողովի դիվանին:

*«Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում Կ. Պոլսո Հայոց Պատրիարքության ընտրյալ տեղապահին, հոգեւոր ողջ դասին եւ պոլսահայ հավատավոր մեր բոլոր զավակներին: Մեր հորդորն ենք բերում ձեզ՝ խոհեմությամբ ու սիրո ոգով հաղթահարել առկա խնդիրներն ու խոչընդոտները եւ եկեղեցական կարգաց ու կանոնաց համաձայն գտնել բարվոք լուծումներ՝ Պատրիարքական ընտրությունն իրականացնելու՝ ի նպաստ պոլսահայության կյանքում խաղաղության ու համերաշխության վերահաստատման»*,- պատգամել է Վեհափառ Հայրապետը՝ ամենողորմ Տիրոջ զորակցությունն ու հովանին հայցելով Կ. Պոլսո Աթոռի ուխտապահ եկեղեցականաց՝ հոգեւոր իրենց ծառայության մեջ:

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

## (Ե դար)

*Սկիզբը՝ թիվ 6*

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ՝ քրիստոնեությունն ուրացող Շավասպ Արծրունին եւ Վնդոն կրակապաշտական մեհյան են կառուցում Դվինում. Վնդոյի որդին՝ Շերոն, դառնում է քրմապետ: Վարդան Մամիկոնյանը՝ հայոց գնդի գլուխ անցած, հարձակվում է նրանց վրա. մեհյանը կործանում են, Շավասպին սպանում, Վնդոյին այրում իր իսկ շինած ատրուշանի վրա, նրա որդի Շերոյին կախաղան բարձրացնում, իսկ Մշկան մարզպանը փախուստի է դիմում: Այս դեպքերից հետո *«...ի տեղի բագնին շինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ Սրբոյն Գրիգորի, անդ փոխելով զաթոռ հայրապետութեանն. եւ հաստատեալ կացուցանէ ի նմա զմեծ հայրապետն Գիւտ...»* («Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն», Երուսաղէմ, 1867, էջ 77):

Վերը հիշատակյալ հայ նախարարների հավատուրացության եւ Դվինում կրակապաշտական մեհյանի կառուցման վերաբերյալ վկայություններ ունի նաեւ Վարդան Արեւելցին («Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 53): Պատմագիրը նաեւ հավելում է. *«...զսուրբ Յովսէփ ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն ի Շահապիվանա, ուր զտուգանաց կանոնն կարգեցին... Վասն որոյ ի մի վայր եկեալ իշխանքն Հայոց, դնեն զԳիւտ պատրիարք, եւ ի Դուին փոխեն զաթոռն, հրամանաւ նորին Յովսէփայ. յորմէ մանաւանդ հնազանդեցան սրբոյն Վարդանայ ամենայն նախարարքն Հայոց...»* (անդ):

Թովմա Արծրունին եւս միեւնույն դեպքի մասին վկայություն ունի: Նա Վնդոյին ներկայացնում է իբրեւ պարսիկ մարզպան ու մոգպետ, որի աջակցությամբ Շավասպը եկեղեցին վերածում է հեթանոսական մեհյանի: Պատմիչը գրում է. *«...քանդեն աւերեն զմեհեանն եւ յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն, եւ փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւտ...»* («Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն Տանն Արծրունեաց», Կ. Պոլիս, 1852, էջ 84-86): Նշենք, որ Թովմա Արծրունու երկում եւս անճշտություններ ու հակասություններ կան. պատմիչը Հովսեփ Ա Հողոցմեցի կաթողիկոսից հետո հիշատակում է «Մովսէս եւ Մեղէս» հայրապետներին (տե՛ս անդ, էջ 81), ընդ որում, նրա վկայության համաձայն՝ Մովսես Մանազկերտցին Հայոց հայրապետ է եղել Մելիտեից առաջ:

Հաջորդ պատմիչները նույնպես նկարագրում են այս իրադարձությունը, սակայն որոշ տարբերություններով: Ստեփանոս Օրբելյանը Ս. Էջմիածնին նվիրված իր «Ողբի» ԺԱ գլխում նկարագրում է Մայր տաճարի անշուք, ամայի վիճակը եւ հայրապետական աթոռի տեղափոխությունը վերագրում Գյուտ Ա Արահեզացուն. նա եւս չի հիշատակում Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսին հաջորդած Մելիտե եւ Մովսես Մանազկերտցիներին: Պատմիչը կաթողիկոսարանի փոխադրումը կապում է Վարդանանց պատերազմի հետ. ըստ նրա վկայության՝ 452 թ. Հովսեփ Հողոցմեցուն արդեն Դվինի Ս. Գրիգոր եկեղեցում հաջորդում է Գյուտ Արահեզացին («Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն», հրատ.՝ Կարապետ Կոստանեանց, Թիֆլիս, 1885, էջ 35):

Պատմիչների վկայությունների մեջ բազմաթիվ են հակասական, իրարամերժ եւ անկապակից տեղեկությունները. նկատենք, որ Եղիշեն եւ Ղազար Փարպեցին այս մասին որեւէ հիշատակություն չունեն. ինչպե՞ս կարող էին դեպքերին ժամանակակից եւ պատմական անցքերին վկա երկու պատմիչներն էլ անտեսել պատմական կարեւորություն ունեցող այս իրադարձությունն ու իրենց երկերում չնկարագրել այն: Ուստի Մաղաքիա արք. Օրմանյանն իրավամբ առավել հավանական է համարում, որ *«Յովհան եւ Թովմաս, ժամանակակիցներ լինելով, երկուքն ալ ուղղակի բերանացի զրոյցէ առած են իրենց գրածը, քանի որ Եղիշէ ու Փարպեցի այդպիսի յիշատակութիւն չունին...»* (Մաղաքիա արք. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 498): Ինչպես գիտենք, Վարդան Մամիկոնյանը եւ Գյուտ Ա Արահեզացին ժամանակակից ու գործակից չեն եղել. Պարսից Պերոզ արքայի օրոք Վարդանն արդեն զոհված էր: Բացի այդ՝ Մշկանն ու Վնդոն մարզպաններ չեն եղել. ստույգ հիշատակություն չկա նաեւ կրակապաշտական մեհյանի կառուցման մասին, քանզի տարբեր են պատմիչների հիշատակած վայրերը: Եղիշեն, որը մանրամասնորեն նկարագրել է Վարդան Մամիկոնյանի գործունեությունը, ըստ արժանվույն գնահատել եւ մեծարել նրան, որեւէ վկայություն չունի Շավասպի մեհյանի կործանման մասին:

Մաղաքիա արք. Օրմանյանը կարծում է՝ *«...փոխանակ հիմնովին կեղակարծ եւ մտացածին նկատելու այդ պատմութիւնը, կը մտածենք, թէ շատ անգամ անունի մը շփոթութիւնն է, որ եղելութիւնը կը խանգարէ, եւ անունը ուղղելով՝ գործը իր կարգին կը մտնէ...»* (անդ): Եթե Վարդան Մամիկոնյանի փոխարեն հիշատակենք նրա ազգանվեր գործունեությունը շարունակող եղբորորդուն՝ Վահանին, իրավիճակը փոքր-ինչ կշտկվի. նախ՝ իրավամբ էլ համընկնում են Պարսից Պերոզի թագավորության եւ Գյուտ Ա Արահեզացու կաթողիկոսության ժամանակաշրջանները: Ապա՝ առավել հավանական է, որ Շավասպի ու Վնդոյի ուրացությունն ու մեհենաշինությունը հենց Գյուտ Արահեզացու հայրապետության շրջանում տեղի ունեցած լինեն. երբ Հայոց հայրապետն առանձնանում է Ոթմսում, հավատուրացների թիվը հետզհետե ավելանում է: Այս մասին հստակ նկարագրություն ունի նաեւ Ղազար Փարպեցին. *«Եկեալ ի դրանէ եւ մաղխազն Գադիշոյ, եւ ժողովեալք առ նա դասք ուրացողացն. որ թէպէտ եւ ուրախանային զառժամանակեաց թախծալից ուրախութիւն կենցաղոյս՝ սակայն իբրեւ տեսանէին զՄամիկոնեանն Վահան այնպէս երեւելի յաճմունս բարւոյ համակեալ՝ ներկեալք խամրէին եւ ծնկեալք թարշամէին...»* (Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, էջ 280):

Գյուտ Ա Արահեզացի հայրապետը հանդիմանում էր ուրացողներին, որոնք երկրային անցողիկ հարստության կամ սին իշխանության եւ փառքի համար ուրանում էին իրենց Աստծուն, հեռանում Նրանից. *«Ժողովեալք նստէին առ սուրբ քահանայապետին Հայոց Գիւտայ, որ ոչ երբէք լռէր յարտասուելոց զմոխրասիրացն զմոլորութիւնս, որ խնդրէր լռելեայն պատճարանս հայթայթանաց հանդերձ նոքօք, երբեմն փախչել յօտարութիւն, եւ երբեմն ի խնդիր լինել օգնականութեան եւ ապստամբել: Առաքէին գաղտ եւ պատգամաւորս միանգամ եւ երիցս առ թագաւորն Յունաց Լեւոն. որոյ թէպէտ եւ յանձն առեալ կամէր օգնել՝ յերկարէր ժամն եւ խափանէին խորհեալքն...»* (Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, էջ 272):

Ղազար Փարպեցու վկայությամբ՝ ուրացողների խմբի ղեկավար Գադիշոն ամբաստանում է Հայոց Գյուտ Ա Արահեզացի հայրապետին Պարսից Պերոզ արքայի առջեւ: Պարսից արքան հրամայում է Հայոց կաթողիկոսին գալ Տիզբոն՝ արքունիք՝ պատասխան տալու մաղխազի մեղադրանքներին: Ահա այսպես է Հայոց հայրապետը պատասխանում պարսից պատգամաբերին. *«Ասա՛ ցթագաւորն, թէ յաղագս գործոյս, զոր ասես. թէ ցայժմ քո ի ծառայից եւ ոչ յինէն կալեալ գործակալութիւն՝ թէ դու կամ թէ ոք ի ծառայիցն քոց որ ետուն, եւ առնուք յինէն՝ ուրախ եմ եւ կամիմ. վասն զի յաշխարհատանջ հոգոյ եւ կարեաց ապրեալ՝ անձին պարապեմ եւ աղօթից...»* (Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, էջ 276):

Պատգամաբերը Հայոց կաթողիկոսի խոսքերը փոխանցում է Պերոզ արքային. վերջինս խիստ զայրանում է իր իշխանությունն ու կրոնը «անարգելու» համար, սակայն մտածելով՝ որոշում. *«Չէ հնար. եթէ ոչ՝ կատարին կամք խնդրոյ նորա, զոր նա կամի. եւ ոչ տամ համբուրել քրիստոնէից զկապանս նորա, որպէս սովորութիւնն: Լուեալ է իմ զպաշտամանց, թէ չառնեն զայն պատիւ կենդանեաց, զոր այդպիսի մեռելոց առնեն: Բայց ասա՛ ցնա, թէ այդմ պատուոց չտամ քեզ պատահել, զոր դու ցասուցանելով զիս՝ գտանել կամիս յինէն: Կա՛ց ուր եւ կամիս, բայց ի գործոյ կաթողիկոսութեանդ հեռի ես, եւ չէ քո...»* (Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, էջ 278-280): Դեպքերին ականատես պատմիչը վկայում է. *«Եւ լուեալ զայս սրբոյ կաթողիկոսին Հայոց Գիւտայ՝ մասամբ միով ուրախացաւ, եւ միւսով եւս մասամբ տրտմեցաւ մինչեւ ի մահ. քանզի լուեալ, թէ ի գործոյն ի բաց եղեւ՝ ուրախացաւ, հանգչելով ի զբօսանաց աշխարհիս. եւ լուեալ, թէ ոչ կապանաց ել հրաման ի թագաւորէն վասն նորա եւ ոչ մահու, որում ցանկանայր ի բազում ժամանակաց, տենչայր լինել արժանի՝ խռովեալ տրտմէր անմխիթար վասն չպատահելոյ ցանկալի եւ մեծ խնդրոյն, որում փափագեալն էր հասանել»* (Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, էջ 280): Այսինքն՝ Գյուտ Ա Արահեզացին, ըստ պատմիչի վկայության, նույնիսկ ուրախանում է, երբ իրեն արգելում են ծավալել վարչական որեւէ գործունեություն եւ հովվապետել Հայոց Եկեղեցին:

Պատմիչը հստակ վկայում է, որ Հայոց հայրապետը որոշ ժամանակ մնում է Տիզբոնում. *«Կացեալ այնուհետեւ ի դրան ըստ իւրում կամելոյ սուրբ կաթողիկոսն Հայոց Գիւտ, բազում համարձակութեամբ պատուել, ոչ միայն ի քահանայիցն եւ ի քրիստոնէիցն, այլ եւ առաւել ի հեթանոսացն, որ իւրաքնչիւր ախտից գտանէին զբժշկութիւն յաղօթից սրբոյն. եւ այլք ի քրիստոնէիցն կողմանցն այնոցիկ ցանկանային ի սուրբ աջոյն առն Աստուծոյ գտանել ձեռնադրութիւն...»* (Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, էջ 280): Այստեղ նա վայելում է քրիստոնյաների եւ հեթանոսների սերն ու հարգանքը. հավանաբար սա դուր չի գալիս Պերոզ արքային, եւ Գյուտ Արահեզացուն ուղարկում են Հայաստան:



Ղազար Փարպեցին հիշատակում է նաեւ, որ Հայոց հայրապետը մեկուսանում է Ոթմսում, եւ նրա գործունեությունը սահմանափակվում է միայն հոգեւոր ոլորտով, այսինքն՝ այլեւս որեւէ մասնակցություն չի ունենում երկրի վարչական ու քաղաքական կյանքին:

Նշենք նաեւ, որ պատմիչը Գյուտ Ա Արահեզացու մեկուսանալը կաթողիկոսությունից հրաժարվել եւ հովվապետական պարտականությունները վայր դնել չի համարում. *«Եւ կեցեալ առաւելապէս պատուովք քան զառաջինն ի Հայս՝ հանգչէր երկայն ծերութեամբ, եւ եդեալ ի դիրս հարց իւրոց խաղաղութեամբ ի գեօղն, որ կոչի Ոդմսու գեօղ, ի գաւառին Վանանդայ»*: Գյուտ Ա Արահեզացու մահվանից հետո Ղազար Փարպեցին որեւէ հիշատակություն չունի տեղապահի կամ հակաթոռ կաթողիկոսի մասին, ուստի Միքայել Չամչյանի վկայությունը՝ *«Պերոզ արքայ ետ դնել փոխանակ Գիւտայ՝ կաթողիկոս ի վերայ Հայոց զՔրիստափոր յազգէ Արծրունեաց...»* (Միքայէլ Չամչեանց, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամն 1874, հտ. Բ, Վենետիկ, 1875, էջ 152) անհիմն է: Մ. Չամչյանը, իբրեւ միակ աղբյուր, վկայակոչում է Թովմա Արծրունու աշխատությունը, որտեղ որեւէ հստակ տեղեկություն չկա, թե որ թվականին է Քրիստափոր Ա Արծրունին հայրապետ դարձել, հիշատակություն չկա հաջորդության կարգի մասին, պարզապես անորոշ կերպով գրված է. *«...ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյ Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս»* («Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն Տանն Արծրունեաց», Կ. Պոլիս, 1852, էջ 88): Ուշագրավ է, որ Ղազար Փարպեցին որեւէ նկարագրություն չունի Հովհան Մանդակունու կաթողիկոսական ընտրության վերաբերյալ, այլ վերջինիս հիշատակում է անմիջապես Գյուտ Ա Արահեզացուց հետո. *«Երկիր պագանէին նախարարքն եւ ամենայն արք զօրուն որք ընդ նոսայն էին՝ եւ հրեշտակակրօն սրբոյն կաթողիկոսին Յոհանայ, որոյ նպատակեալ յուղարկեաց զնոսա իւր ստոյգ եւ արդար ոգւոյն օրհնութեամբ ի գործ պատերազմին»* (Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, էջ 296):

Հիմնվելով դեպքերին ժամանակակից պատմիչի վկայությունների վրա՝ փորձենք ներկայացնել մեր դիտարկումները:

*Շարունակելի*

***Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝** qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

**web կայք՝**
**krishayas.wordpress.com**
Ստոր. տպագր. 19.4.2017թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**